68. ԾՈՒՌ ԱԽՉԸԿՆԵՐ ՈՒ ԾՈՒՌ ՄԵՐ

Մարթ մի կառնի ուր էշ, բեռ կթալե վրրեն, դեղեն կէրթա քաղաք։ Էդ օր շատ անձրև կիգա, տիլ կէղի։ Էդ մարթ ալերու միշով կէրթա։ Էշը շոր տեղով կէրթա։

Տեր կվաղե իշու ճակատ կպագնե, կըսե.— Ախկլե-բողե, տուն քանց ընծիկ խելոք իս։

Իշու անկըշեն կասե թե.— Հազար ղուրուշ կիտամ քըզի, գնա քաղաք բազար էրե արի։

Հազար ղուրուշ կդնե բեռան մեջ, փետ մը կզանի իշու օռուն, ինք կթողնի կիգա գեղ։

Էշ կէրթա քաղաք։ Քաղքի տղեկներ կտեսնին, տեր չկա իշու էտին։ Կէրթան, էշ կբերեն իրենց։

Քանի մի շաբաթ կմնա, մարթ կըսե. «Մեր էշ շատ բազար էրե, չկրնա պերե, էրթամ հ'առեմ»։

Հայ կելնի ու կէրթա քաղաք։ Ճամփու վրնի տուքնից կխարցու, կըսե թե.— Մեր Ախկլե-բողեն էկավ էստեխ բազար էրաց, ո՞ւր է։

Տուքընչին կըսե.— Մեր Ախկլե-բողեն շատ խելքով էր, ուր ապրընքեր փոշտով ճամփեց, զինքն էլ տարին էրի կազի (դատավոր)։

Մարթ կըսե.— Պիտի էրթամ Ախկլե-բողու մոտ։

Կէրթա, կէրթա առվրտնոց մի կուգա ըտրա ռաստ. փունշ մի առվուտ կքաղե, կհարցու.— Կազու տուն ո՞րն է։

Կրսին.— Էն պանցը քոշկն է։

Էտիկ կէրթա կտեսի օր կազին նստի աթոռի վրեն։

Առվուտ կպարցրցու, կրսե.— Զո՛ւ, Ախկլե-բոզե, չու։

Կազին կրսե.— Էսա մարթ ծո՞ւռ է, ի՞նչ է։ Գացեք էնի բերեք էստեղ։

Մարթուն կտանին կազու հ՞առեճ. մարթն էլման կասի.— Զո՛ւ, չո՛ւ, Ախկլե-բոզե։

Կրսին.— Ծուռ է։ Կծեծին դուս կքշին։

Էդի կէրթա քազքեն դուս էշ մի կտեսնի։ Զորս հինգ օսկի կմտուցի իշու օռ, կտանե քաղքի մեշ կրսե.— Իմ էշ օսկի կցռե, թե չեք հավատար, տեսե՛ք։ — Փետ մի կզարնա, օսկի մի կընզնի։

Դուքանչիմ էտոր կուտա հարիր օսկի, էշ կառնի,

Իշու տեր կասե.— Իմ էշ էնպես տեխ մի կապեք, ամիս դիր մի խոտ տաք։

Էշ առնող կտանի կապե ախոռ, էրկու շաբաթ խոտ չիտա։ Էրկու շաբաթ հետև իշու տեր կէրթա, դրռան ծրկեն կիշկա. էշ փիցեր է, օտներ տնկվեր, գիտե օր օսկի է ցռեր։

Կէրթա էրկու շաբաթ էլ կմնա, կառնի խոտ ու կիգա, դուռ կճխթե, կճխթե, չբացվիր։ Կրսե. «Իմ էշ շատ օսկի ցռեր է», կզանա դուռ կկոտրի, կմտնի ներս, տեսնե թե էշ փիցեր է։

Իշու հ՞առճին տեր կէրթա եզ մի կզնա։ Կտանե տուն, մոր կասա.— Նանե, էս եզ աղեկ պահե, ես կէրթամ եզմ էլ բերիմ։

Էդ կնիկ օր մի շուրվա կէփե։ Մենծ աղջրկեն կրսե.— Գնա քիչմ բանջար բե, թալենք շուրվի մեշ։

Աղջիկ կէրթա դաշտ, ծառ մի կէղի, ծառի տակ փոս մի կէղի։ Էդ աղջիկ գիշա, կրսե՝ «Ես էրթամ իրկան, ինձի տղեմ էղնի, անուն դնեմ Փիլիպոս, հ՞ելնի ծառ ու ընգնի էս փոս»։

Շատ կանգնա, միճնեկ քուր գիկա, կրսա.— Իմ մար հերսոտեր է, ընչի՞ անգրցեր ես։

Քուր կրսա թե.— Ապա, ընձի տանին իրկան, տղեմ էղնի, անուն դնին Փիլիպոս, էլնի էս ծառ, ու ընկնի էս փոս, վա՛յ Փիլիպոս, վա՛յ Փիլիպոս։

Վերջապես չորս քուր ու մեկ մեր գիկան փոսի վրեն ու գիլան։

Մերը կրսա.— Լալով օգուտ չէներ, էրթանք եզ մորթենք, խեր էնենք։

Կէրթան եզ մորթեն, իրիցուն հինգ ղուրուշ կուտան պատարագ կէնին, հրիսա կդնին, գեղի մարթեկաց կանչեն, հրիսա ուտեն։

Տղեն կուգա, կրսե.— Եզ հ՞ո՞ւր է։

32—1086

Կրսե.— Ըպա, քու քուր կկարքվի, տղե մի կէղնի, անուն կդնինք Փիլիպոս, կէլնի էս ծառ, կընգնի էս փոս, կմեռնի, մենք էլ եղ մորթեցինք, Փիլիպոսի հոգուն խեր էրինք։

Տղեն կրսե.— Վայ, ես ձեր խերն անիծեմ, դուք ի՞նչ էշ եք, ես ձրզի պտի ըսպանիմ։ — Կմտածե, կմտածե, կրսե «էրթամ աշխարք պտռտիմ, թե քանց իմ մեր ավելի ծուռ էղավ, իմ մեր չըմ մորթե»։

Գէլնի կէրթա՛, կէրթա՛, գեղի մի ռաստ գիկա։ Կէրթա տուն մի կմտնի, կրսե.— Բարև քըզի խնամի։

Կրսե.— Աստծու բարին, բարով էկար։

Հարսներ կվագնին, կեսրոջ կրսին թե.— Հարցուր տեսիմ, էս ո՞ր կողմեն խնամի է։

Կիսուր կհարցու.— Դու ի՞նչ կողմանից խնամի ես։

Էգ մարթ կվերցու, կրսե թե.— Մեզի ոոց քուռիկ մի կար, ձեր էգ քուռիկ ուզինք մեր քուռկուն։ Էն քուռկուն մե տղեմ էղեր է, ձեր էշ էկեր եմ տանիմ, էնիմ մեր նոր քուռկան քավոր։

Էդ կիսուր կէլնի հարսներու շարքեր (ոսկի ճիտնոցներ) կառնի, կախի իշու վզեն, իրկան փալթոն էլ կթալե վրեն, կրսե։— Տա՛ր, շուտ բեր։

Էշ կառնի ու կէրթա։ Էրկօր ճամփա կքալե, կանոթնա։ Կտեսի օր հարս մի հաց կփռե։ Մարթ կրսե ինքն ուրին՝ «Թը ուզիմ, հաց մի տա։ Չըմ ուզիմ, կէրթամ իմ էշն ու օսկին կպահիմ, գամ քանիմ հաց առնիմ փախիմ»։

Կէրթա էշ պահե ու կուգա, հունթ մի (թևի տակ) հաց կառնե, կփախնի։ Կնիկ մի կուգա էդ հայու ռաստ, կրսե.— Քեռի, ո՞ւրկե կուքաս։

Կրսե.— Ջանամ դարասուց (դժողքի ձոր)։

Կրսե.— Մրռնիմ քըզի, իմ ախպեր շանամ-դարասին էր, չտեսա՞ր։

Կրսե.— Քու ախպեր խումար (թղթախաղ) խաղցավ, էրկու հարիր օսկի տարվեր է, բռներ դրեր են մապուս (բանդ)։

Կրսե.— Ա՛ռ էրկու հարիր օսկին, տա՛ր իմ ախպեր փըրցուր։

Կառնի էրկու հարիր օսկին, կէրթա կառնի ուր էշն, օսկին էլ, կերթա հասնի ճաղցի մի։ Կտեսնի օր թե իշու տերն էլ, փարի տերն էլ էկան։ Իշու տեր ձիով է, փարի տեր պայա է։ Մարթ կէրթա ուր էշն ու փարեն կպայե։

Ճաղցրպըրնին կէրթա կրսե.— Դուն քեչե՞լ ես։

Կրսե.— Խա՛, ես քեչել եմ։

Կըսե.— Աստուծ քու տուն ավրի։ Թակավորու հարսնիքին դըհոլ պատռեր է, քաշալ մարթ կփնտռեն, օր թե էնդրա դլխու կաշին քըոթին, տանին քաշին դըհոլի վրա, փախիր, էլիր ծառ։

Էդ ճաղցըպան կփախի, կելի ծառի գլուխ։ Մարթ ջաղցըպանի շորեր կհագնի ու կանի ճաղաց։

Փարի տեր, իշու տեր, կուգան կըսին.— Բարի լուս ճաղցըպան։

Կըսե.— Ասսու պարին։

— Մարթ մի իշով էկավ ըստեխեն ընցավ, չտեսա՞ր։

Կըսե թե.— Մարթ մի էկավ, ելավ ծառի գլուխ, էլ չգիտեմ ի՞նչ դավի էր։

Էդ մարթիկ կէրթան կանին ծառի տակ, կըսին.— Շան որդի, էշիր, մըր փարեն, մըր էշ տուր։

Ծառի վերևի մարդ ծեն չի հաներ։

Մեկ էլ կըսին։ Ծառի դլխու մարդ շախուն ջեորեն կհանե, ու կթալե գլխու կաշին կտրտե, կըսե.— Նե՞ (ոչ) ընձի, նե քըղի, նե՞ ընձի, նե՞ քըղի։

Իշու տեր ու օսկու տեր կըսին.— Էդ մարթ ծուռ է։ — Կթողուն կէրթան։

Ճաղցըպան ծառից կիշնի ցածր։

Էդ օսկու տեր կըսե.— Ես պայա (ոտքով) եմ, չեմ կրնար քելեր, տուն կէրթամ։

Իշու տեր կըսե.— Ես ձիավոր եմ, պիտի էրթամ գտնիմ։

Էդ սուտ ճաղցըպան կելնի ուր էշն ու փարեն կառնի, կէրթա։ Կէրթա կտեսնի իշու տեր ձիով ընգեր ուր ետև։ Կտանի էշն ու փարեն կպայե, փետ մի կբռնե ուր ձեռք, կթոփլտա ու կքելե։

Իշու տեր կուգա, էդ մարթուց կհարցու, կըսե.— Ախպեր, իշով մարթ մի չի տեսա՞ր, էստեղից անցավ։

Կըսե.— Իրեք-չորս սահաթ հառեճ անցավ իշով մարթ մի, փալթոն էլ թալուկ վրեն։

Ձիավոր կըսե.— Էրթամ էդ իշու հետև, բալքի (գուցե) էշն ու էդ մարթ պռնիմ։

Էդ մարթ, օր կթոփլտա, կըսե.— Ձիով չըս կրնա հասնի, իճի տակ, ես ձին կբռնիմ, օտնով դնա, շուտ կհասիս։ Ձում ձին էնե մե՞կ, էրկո՞ւ, իրե՞ք չորս, դու կէնիս, մե՞կ, ե՞րկու, մե՞կ, ե՞րկու։

Ձիու տեր կհավատա, ձիուց կիշնի, ձին կուտա էդ թոփլտացող մարթուն ինք կէրթա։ Քիչ մի ճամփա կէրթա. էդ թոփալ մարթ ձիուն քանիմ փետ կզարնե, ձին կփախնի կէրթա կորսվի։ Պոզ իշու

մի պոչ կգտնե էդ թուփալ մարթ, ու կհորե գետին։ Կվազե ձիու տիրոջ հետևեն, կըսե.— Էկո՞ւր, քու ձիուն քաշին գետնի տակ։ Էկուր հանենք։

Էդ մարթ կուգա, էրկուս մեկ տեղ կպոնեն էդ իշու պոչեն, կքաշեն, պոչ կփրթի, կընգնին գետին։

Ձիու տեր կթողա, կէրթա ուր տուն։

Թուփլտացող մարթ կէրթա կառնի էշն ու ուր փարեն կէրթա ուր տուն։

Կըսե.— Քանց իմ ծռեր, ծուռ էլ կար, իմ ծռերուն չըմ սպանիր։